ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 հունվարի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

4
(3213)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՐԺԵՔԸ 621,3 ՄԼՆ ԴՐԱՄ Է

Երեւանում կառավարական առանձնատների սպասարկման արժեքը նախորդ տարվա համեմատ փոփոխություն չի կրել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկանում է, որ «Կառավարական ամառանոցների տնտեսություն» ՊՈԱԿ-ին այս տարի եւս վարչապետի աշխատակազմը հատկացրել է նույնքան գումար, որքան 2025 թվականին՝ 621 մլն 340 հազար 100 դրամ: Սպասարկման ծախսերը 2024 թվականի համեմատ ավելացել են մոտավորապես 18 մլն դրամով: Նշենք, որ 2024 թվականին այդ ծախսերը կազմել են շուրջ 603 մլն դրամ:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը դեռ 2024 թվականին կառավարության նիստի ժամանակ դժգոհեց, որ կառավարական առանձնատանը, որտեղ ապրում է, ցուրտ է, ջեռուցումից բացի՝ տաքացուցիչ է միացնում: Հենց սրանից հետո առանձնատներին հատկացվող գումարը ավելացվեց:

2023 թվականին սպասարկման համար հատկացվել էր 542 մլն դրամ, 2022 թվականին՝ շուրջ 470 մլն դրամ:

ՊՈԱԿ-ում մշտապես բնակվել են ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաներ, այժմ 4 ընտանիք է բնակվում՝ Նիկոլ Փաշինյանի, Արարատ Միրզոյանի, Սուրեն Պապիկյանի եւ Ալեն Սիմոնյանի: Բայց այստեղ շուրջ 10 առանձնատուն կա, որտեղ կարող են բնակվել բարձրաստիճան պաշտոնյաները:

Տարիներ առաջ մամուլը գրել էր, որ ավարտվել են 2 առանձնատան կապիտալ նորոգման աշխատանքները, որոնց գումարը տրամադրվել է պետբյուջեից՝ գաղտնի որոշումներով: Այդ տներում ապրելու են ԱԱԾ տնօրենն ու ՆԳ նախարարը, որոնք չեն շտապում տեղափոխվել «դաչաներ», թեեւ տներն արդեն տեւական ժամանակ է՝ պատրաստ են:



Armlur.am-ի տեղեկությունների համաձայն՝ գործարար Նարեկ Նալբանդյանը AMIO բանկից գնել է Գեղարքունիքի մարզի «Սեւան» պանսիոնատը: Մենք տեղեկացանք, որ Նարեկ Նալբանդյանը նպատակ ունի այն Ծաղկաձորի «Էյթի էյթ հոթել եւ սպայի» համալիրի մաս դարձնել: Առաջիկայում կսկսի այնտեղ լայն թափով աշխատանքներ իրականացնել: Հիշեցնենք, որ դեռեւս 2024 թվականի փետրվարին Նիկոլ Փաշինյանը Ծաղկաձորում ներկա էր գտնվել վերաբրենդավորված եւ վերանորոգված Eighty Eight Hotel & Spa հյուրանոցային համալիրի բացմանը: «Պրոյեկտ Ինտեր-Ինվեստ» ՍՊԸ-ն ձեռք էր բերել նախկինում գործող «Գոլդեն փելիս» Ծաղկաձորի հյուրանոցային համալիրը եւ այն վերաբրենդավորել: Վարչապետը շրջայց էր կատարել հյուրանոցային համալիրում, ծանոթացել կատարված աշխատանքներին, ստեղծված պայմաններին եւ առաջարկվող ծառայություններին: «Պրոյեկտ ինտեր-ինվեստ» ՍՊԸ սեփականատերը գործարար Նարեկ Նալբանդյանն է: 2022թ.-ին «Գոլդեն փելիս» հյուրանոցը Նալբանդյանի ընկերությանը վաճառվել էր 5 միլիարդ դրամով:

Ամփոփվել են 2025 թվականի ընթացքում պետությանը պատճառված վնասի վերականգնման ցուցանիշները: Վերականգնված վնասի ցուցանիշներում ներառված է նաեւ ռազմավարական նշանակություն ունեցող՝ 1 միլիարդ 755 միլիոն դրամ արժեքով ընկերությունը: Ավարտված քրեական վարույթներով վերականգնվել է պետությանը պատճառված վնասից 15 միլիարդ 440 միլիոն դրամ, որը համարժեք է շուրջ 41 միլիոն 174 հազար ԱՄՆ դոլարի: Համեմատության համար ասենք, որ նշված ցուցանիշը շուրջ 2,4 միլիարդ դրամով գերազանցում է 2024 թվականի վնասի ցուցանիշը: Պետությանը պատճառված վնասի վերականգնումներ են կատարվել ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի եղբոր, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Արագած Ախոյանի եղբոր եւ նրանց հետ առնչություն ունեցած անձանց կողմից կատարված հանցանքների վերաբերյալ քննվող, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Կարո Կարապետյանի ընտանիքի անդամների, նախկին պատգամավորներ Նահապետ Գեւորգյանի, Հարություն Փամբուկյանի եւ նրանց ընտանիքի անդամների կողմից կատարված հանցանքների վերաբերյալ քննվող, ինչպես նաեւ մի շարք այլ քրեական վարույթների շրջանակներում:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը Հայաստանում 2025 թվականի նոյեմբերի 6-ին ընդունել էր Հնդկաստանի պաշտպանության նախարարության պաշտպանական արտադրանքի վարչության (ռազմարդյունաբերության խթանման) միացյալ քարտուղար Ամիտ Սաթիջայի գլխավորած պատվիրակությանը: ArmLur.am-ը տեղեկանում է, որ պատվիրակությունը փոխնախարարին նվիրել է արծաթյա առագաստանավ/հուշանվեր/: 2 ամիս անց փոխնախարարն այն հայտարարագրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նվերների ռեեստրում: Հուշանվերն արժեցել է 90 հազար 308 դրամ:

Շարունակությունը՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում

«Ժողովուրդ» օրաթերթի հաջորդ համարը լույս կտեսնի փետրվարի 3-ին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՔՊ-Ն ԱՅԼԱՍԵՐՎԱԾ Է. ՄԵԿԸ ՄԻ ՔԻՉ ՇԱՏ, ՄԵԿԸ ՄԻ ՔԻՉ ՔԻՉ»

Հարցազրույց ՀՀ ԱԺ անկախ պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ:

-Պարոն Աղազարյան, «Ժողովուրդ» օրաթերթը առավոտյան մամուլի հրապարակում էր ունեցել, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունում արդեն սկսվել է, այսպես ասված, մրցավազքը: Եւ կուսակցականները, եւ առաջադրված թեկնածուները պայքարելու են իրենց տեղերի համար, իսկ տեղերը որոշվելու են ըստ վարկանիշների: Երբ Դուք առաջադրվում էիք ՔՊ-ի կազմում, կա՞ր նման երեւույթ. այդ առաջադրումը, այդ ռեյտինգն այդքան կարեւո՞ր էր առաջ:

-Ես «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության անդամ էի, նույնիսկ, մինչեւ իշխանություն դառնալն էլ դրան մոտիկ բաներ կային: Հիմա այս ճանապարհը, որ այսպես որդեգրվել է ՔՊ-ի կողմից, ավելի շատ է: Իշխող կուսակցության համար դա շատ տրամաբանական գործընթաց է: Խնդիրն, իհարկե, ուրիշ տեղ է: Որքանով կհաջողվի այդ ամեն ինչն անել պարզ, թափանցիկ յուրաքանչյուր ՔՊ-ականի համար, որպեսզի յուրաքանչյուր ՔՊ-ականի համար այն արդյունքը, որ պիտի գրանցվի, դառնա իր արդյունքը՝ անկախ այն հանգամանքից, թե որ տեղում է ինքը հայտնվել նախընտրական ցուցակում, որ դառնա իր արդյունքը: Սա շատ կարեւոր խնդիր է, որը մենք, երբ որ ես ՔՊ-ի անդամ էի, ցավոք սրտի, մի էտապում չկարողացանք լուծել: Ես ինքս էի այն ժամանակ մեխանիզմներ առաջարկել: Թերություններն ի հայտ եկան: Բնական է՝ ինչը որ ունի սկիզբ, այն էլ ունի վերջ:

-ՔՊ-ականները հիմա մրցավազքի մեջ են ընկել իրենց հեղինակությունը բարձրացնելու համար, բայց մենք տեսնում ենք ընկած հեղինակություններ: Օրինակ՝ մի պատգամավոր եղբորը տեղավորել է վարչապետի աշխատակազմում, համայնքապետերն իրենց կանանց անուններով ՍՊԸ, ԱՁ եւ այլ ընկերություններ են բացում, որոնք էլ մասնակցում են համայնքապետարանի գնումներին, միլիարդներ են ծախսում: Նույնը՝ պատգամավորական մանդատի չարաշահում չէ արդյոք Հայկ Կոնջորյանի բնակարանի հարցը: ՔՊ-ի շուրջ պտտվող նման հարցերը չե՞ն հեղինակազրկելու ՔՊ-ն:

-Յուրաքանչյուր իշխանություն ունի մարդկանց այլասերելու հատկություն, բնույթ: Մի դեպքում դա տեւում է երկար ժամանակ, մի դեպքում՝ համեմատաբար կարճ ժամանակ՝ կախված այն հարաբերություններից, բարքերից, որ գոյություն ունեն այդ կուսակցության ներսում:

-ՔՊ-ն այլասերվե՞լ է:

-Իհարկե այլասերվել է: ՔՊ-ն հիմա բավականին այլասերված է այդ իմաստով: Այդ այլասերվածության ֆոնին պիտի քաղաքական ղեկավարությունը պահի իշխանությունը, որպեսզի այն ծրագրերը, որ ինքը մտածում է՝ պետք է իրականացնի՝ պետականության շահերից ելնելով, ենթադրենք, կյանքի կոչի՝ պետք է դիմի ուրիշ քայլերի, որպեսզի պահի իր իշխանությունը, որն էլ անում է այս իշխանությունն ու արդեն մեկ տարի:

Հետեւաբար, որտե՞ղ է վստահությունը, որ այդ ձեւով եկած իշխանությունը կունենա անհրաժեշտ, բովանդակային իմաստով, անհրաժեշտ լեգիտիմության աստիճան, եւ որպեսզի կարողանա լուծել, կառավարել այն մարտահրավերները, որոնք ծագել են մեր պետականության առջեւ: Սա բերելու է շատ վատ իրողությունների: Հետեւաբար, պետք է այնպես անել, որ Նիկոլ Փաշինյանը չվերարտադրվի:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կառավարությունն իր երեկվա՝ հունվարի 22-ի նիստում հավանություն տվեց «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության միջեւ Հայաստանի Հանրապետության տարածքում Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի գտնվելու պայմանների մասին» համաձայնագրին:

Հիմնավորման մեջ նշվում է, որ Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամը (ԿԶԵՀ) ստեղծվել է Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ղրղզստանի, Ռուսաստանի եւ Տաջիկստանի կողմից 2009 թվականի հունիսի 9-ի «Կայունացման եւ զարգացման եվրասիական հիմնադրամի հիմնադրման մասին» պայմանագրով: Հիմնադրամի հիմնական նպատակն է նպաստել անդամ պետությունների տնտեսական եւ ֆինանսական կայունության ամրապնդմանը: ԿԶԵՀ-ի հիմնադիր պետությունների մասնակցության չափը կազմում է 8,513 մլրդ ԱՄՆ դոլար, որում Հայաստանի Հանրապետության մասնաբաժինը 1 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք է (որից 100 հազար ԱՄՆ դոլարը վճարվել է դրամական տեսքով, 900 հազար ԱՄՆ դոլարը վճարվել է ամբողջությամբ մարված՝ հասարակ ոչ շրջանառելի եւ անտոկոս մուրհակի տեսքով):

ԿԶԵՀ ծրագրերի ընթացիկ պորտֆելը Հայաստանի Հանրապետությունում ներառում է 10 ծրագիր՝ 538 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով մակրոտնտեսական, գյուղատնտեսական, տրանսպորտային, սոցիալական ուղղություններով:

2023թ. մշակվել եւ Հիմնադրամի խորհրդին է ներկայացվել արդիականացված կանոնադրական փաստաթղթերի փաթեթ, որի նպատակն է ապահովել ԿԶԵՀ 2022-2026թթ. ռազմավարության դրույթների անխոչընդոտ իրականացումը՝ Հիմնադրամին միջազգային ֆինանսական կազմակերպության կարգավիճակ շնորհելու միջոցով:

Համաձայն փոփոխված կանոնադրության 1-ին հոդվածի՝ ԿԶԵՀ-ը միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող միջազգային կազմակերպություն է: Եվ որպես այդպիսին (ինչպես միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող մյուս կազմակերպությունների դեպքում) անհրաժեշտություն է առաջացել սահմանել Հիմնադրամի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվելու պայմանները:

ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԵՆ ԶՈՀՎԵԼ

Գազայի հատվածի Նեթսարիմ, Դեյր ալ-Բալահ եւ ալ-Բուրեյջ ճամբարների վրա Իսրայելի կողմից արձակված կրակոցների եւ հրետակոծությունների հետեւանքով զոհվել է 11 պաղեստինցի, որոնց թվում՝ 3 լրագրող: Այս մասին հայտնում է Al Jazeera-ն:

Պաղեստինցի երեք լրագրողները զոհվել են նկարահանման նպատակով մեքենայով Գազայի կենտրոնական հատվածում գտնվող Նեթսարիմ շրջանի տեղահանվածների ճամբար մեկնելիս:

Պաղեստինի լրագրողների միությունը հայտարարության մեջ նշել է, որ զոհված լրագրողները «կատարում էին մարդասիրական, լրագրողական առաքելություն՝ նկարահանելու եւ փաստագրելու քաղաքացիական բնակչության տառապանքները»:

Գազայում Եգիպտոսի օգնության գործողությունները վերահսկող կոմիտեի խոսնակ Մուհամմադ Մանսուրը հայտարարել է, որ Իսրայելի կողմից թիրախավորված երեք լրագրողները մարդասիրական առաքելություն էին իրականացնում Նեթսարիմում, որը գտնվում է իսրայելական ռազմական դիրքերից մոտավորապես վեց կիլոմետր հեռավորության վրա: Նա մեղադրել է իսրայելական կողմին նրանց դիտավորյալ թիրախավորելու մեջ:

Իսրայելի «12-րդ ալիքի» հաղորդմամբ՝ Կահիրեն դեպքի առնչությամբ բացատրություններ է պահանջել Թել Ավիվից:

Իսրայելի բանակից հայտնել են, թե այդ տղամարդիկ ՀԱՄԱՍ-ի անդամներ են եղել եւ օգտագործել են անօդաչու թռչող սարք, որը մոտեցել է իրենց ուժերին:

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը հայտարարել է, որ 2023 թվականի հոկտեմբերին Գազայում պատերազմի սկսվելուց ի վեր սպանվել է գրեթե 220 լրագրող:

«ԱՆՀՈՒՍԱԼԻ ՎԱՐԿԵՐ»

Կառավարությունը փոփոխություններ եւ լրացումներ է կատարել նախկինում ընդունած՝ «Անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառումը եւ կարգը հաստատելու մասին» որոշման մեջ:

Որոշումն ընդունվել է ՀՀ կառավարության հունվարի 22-ի նիստում:

Ըստ այդմ՝ առաջարկվում է Արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության աշխատող անձանց եւս հնարավորություն տալ օգտվելու որոշմամբ սահմանված միջոցառումից: Սահմանվել են տեղեկատվական բազաների եւ միջոցառման իրականացման համակարգի տվյալներում կամ դրանց միջեւ տվյալների փոխանակման ընթացքում առաջացած տեխնիկական վրիպակների արդյունքներով աջակցության իրավունքը դադարեցված շահառուների աջակցության իրավունքի վերականգնման մեխանիզմներ: Որոշմամբ առաջարկվում է նաեւ սահմանել, որ մինչեւ սույն որոշումն ուժի մեջ մտնելը տեղեկատվական բազաների միջեւ ինքնաշխատ եղանակով տվյալների փոխանակման ընթացքում ի հայտ եկած տեխնիկական վրիպակների արդյունքում շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղված աջակցության ավել վճարված գումարները վարկատուների կողմից պետական բյուջե հետ վերադարձման ենթակա չեն: Երկարաձգվել է միջոցառման շրջանակում (շահառու դառնալու համար) դիմելու ժամկետը մինչեւ 2026թ. դեկտեմբերի 31-ը:

ԹՈՒՐՔԻԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է

Ըստ թուրքական լրատվամիջոցների՝ Իգդիրում տեղի է ունեցել քննարկում Հայաստանի հետ Ալիջան սահմանային անցակետի բացման վերաբերյալ:

Հաղորդվել է, որ Հանրապետական ժողովրդական կուսակցության Իգդիրի տարածաշրջանային մասնաճյուղը Իգդիրի առեւտրաարդյունաբերական պալատին ներկայացրել է համապարփակ գործողությունների ծրագիր՝ «սահմանային անցակետի բացումից հետո զբոսաշրջիկների սպասվող հոսքի կապակցությամբ»:

Ընդգծվել է, որ «պատրաստվել է Ալիջան սահմանային անցակետի բացման վերաբերյալ կարեւոր զեկույց, որը ներառում է դրույթներ՝ Հայաստանից զբոսաշրջիկներին ընդունելու եւ սպասարկման չափանիշները բարձրացնելու համար»:

Իգդիրի առեւտրաարդյունաբերական պալատի ղեկավար Քամիլ Արսլանը հայտարարել է. «Մենք կաշխատենք ապահովել բոլոր հարմարությունները ներգնա զբոսաշրջիկների համար: Մասնավորապես, մենք կակտիվացնենք մեր տեղեկատվական գործունեությունը, որպեսզի օգնենք մեր առեւտրականներին հարմարվել այս գործընթացին»:

Թուրքիան հայտարարել է այս ամսվա վերջին Հայաստանի հետ սահմանային անցակետը բացելու ծրագրերի մասին:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԵՂՈՒԿ ԳԱԶԻ ԿՏՐՈՒԿ ԹԱՆԿԱՑՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետություն 187 տնտեսվարող սուբյեկտ հեղուկ գազ է ներմուծում, եւ չի կարող այդտեղ լինել ոչ հակամրցակցային համաձայնություն, ոչ գերիշխող դիրքի չարաշահում: Այս մասին հունվարի 22-ին լրագրողների հետ ճեպազրույցում նշեց ՀՀ տնտեսական մրցակցության եւ սպառողների պաշտպանության հանձնաժողովի նախագահ Գեղամ Գեւորգյանը:

«Այդ 187 հոգուց որեւէ մեկի մասնաբաժինը 10% -ը չի գերազանցում: Թանկացումը ստեղծված առաջարկ-պահանջարկ հարաբերակցության արդյունք էր, լցնողների քանակը շատ է, առաջարկը քիչ է: Հեսա մի քիչ հետո կգա, կիջնի գինը, որեւէ սարսափելի բան չկա: Ինչպես հայտարարեց Հայաստանի վարչապետը նախորդ կառույցի նիստում, տրանսպորտային հանգույցների խնդիրների լուծման պարագայում այլեւս մենակ ցամաքային տրանսպորտից կախված չենք լինի»,-ասաց նա:

Հարցին՝ որքան հեղուկ գազ է ներմուծվել նախորդ տարվա հունվարին եւ որքան՝ այս տարվա հունվարին, նա պատասխանեց. «Ես երբեք չեմ ասել, այս տարի քանակը քիչ է, հիմա կոնկրետ թվերը չեմ հիշում, հունվարը հունվարի համեմատ քանակի խնդիր չունենք, բայց անցյալ տարի հունվարին էլ գրեթե նույնն էր, կարող է մի փոքր ավել լինի: Անցյալ տարի հունվարին էլ էր թանկ, հունիսին էլ է թանկ լինում: Այսինքն կան ամիսներ, երբ հեղուկ գազը թանկ է լինում: Կա սեզոնի հարց, որը կապված է բնակլիմայական պայմանների հետ: Այսինքն, բերում են, ապրանքը քչանում է, թանկ են վաճառում: Ես չեմ էլ ասում՝ իրենք թանկ չեն վաճառում, բայց դա բիզնես կառուցվածքն է»:

ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԿՈՉԸ

Կալիֆոռնիայի նահանգապետ, դեմոկրատ Գեւին Նյուսոմը Եվրոպային կոչ է արել դրսեւորել տոկունություն եւ «ապտակ հասցնել» ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին: Նա ամերիկյան առաջնորդին անվանել է «թույլ» եւ ասել, որ Եվրոպական միությունը պետք է «շատ ագրեսիվ» հակահարված տա նրան, հայտնում է Euronews-ը:

«Նա կարողանում է օգտագործել թուլությունները, բայց նահանջում է, երբ հարվածում են նրա դեմքին», -ասել է Նյուսոմը: Գրենլանդիան իր վերահսկողության տակ վերցնելու Թրամփի փորձը անվանել է «խենթություն», բայց նշել է, որ ԱՄՆ նախագահը չի փորձի գրավել այն «ռազմական ճանապարհով»:

Նա հայտարարել է, որ եվրոպացիները պետք է լինեն ավելի համարձակ, դադարեն փորձել հաճոյանալ Թրամփին եւ «կրակի դեմ պայքարեն կրակով»: «Եվրոպացիները պետք է իրենք որոշեն՝ ինչ անել: Բայց մի բան նրանք չպետք է անեն՝ այն, ինչ անում էին մինչ այժմ: Նրանց խաբում էին: Այս տղան (Թրամփը) մարդկանց հիմարի տեղ է դնում եւ դա ամոթալի է: Ժամանակն է սրան լուրջ վերաբերվել եւ դադարել հանցակից լինել: Ժամանակն է ոտքի կանգնել եւ հաստատակամորեն հայտարարել սեփական դիրքորոշման մասին, դրսեւորել տոկունություն», -նշել է Նյուսոմը»:

ՎԱՐՔԱԳԻԾ

ՎԱՐՈՒՅԹ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Դիլիջանի ՔՊ-ական համայնքապետ Դավիթ Սարգսյանը, որն առանձնապես չի փայլում իր գիտելիքներով, ինչպես շատ ՔՊ-ականներ, հայտնվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի խոցոռացույցի տակ, սակայն ոչ թե կոռուպցիայի ենթատեքստում, այլ վարքագծի:

Բանն այն է, որ իր կենսագրությունում սեփական սեռն իբրեւ «արու» գրած համայնքապետի նկատմամբ, ով նույնիսկ շփոթել է, թե որ համալսարանում է սովորում, Հանձնաժողովը վարույթ է հարուցել լրագրողների հետ Հովհաննավանքում գռեհկաբար խոսելու պատճառով:

Հանձնաժողովը գտել է, որ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավարը, պատասխանելով լրագրողների հարցերին, վիրավորել է նրանց:

Հանձնաժողովը ուսումնասիրել է այս տեսանյութը եւ եզրակացրել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը եւ մասնագիտական աշխատանքին:

Քննարկելով Դ. Սարգսյանի կատարած արտահայտությունների բովանդակությունը (Կանոնագրքի 51-րդ կետի համատեքստում)՝ առանձին, ինչպես նաեւ նրան տրված հարցերի եւ իր պատասխանների ամբողջական բովանդակությունն ու ձեւը, այդ թվում՝ տոնայնությունը՝ Հանձնաժողովը գտել է, որ թեեւ Դ. Սարգսյանի խոսքը չի կարող համարվել անձնական բնույթի խիստ վիրավորանք, այն, այնուամենայնիվ, առերեւույթ վիրավորական, հեգնական է, տոնայնությամբ առերեւույթ համաչափ չէ լրագրողների խոսքին եւ չի պարունակում լրագրողների վարքագիծը քննադատող, նրանց գործողությունները գնահատող բովանդակություն: Հանձնաժողովը հատկապես խնդրահարույց է գտել Դ. Սարգսյանի խոսքի արտահայտման ձեւը, այդ թվում՝ տոնայնությունը եւ ոչ վերբալ հաղորդակցման ձեւը, որոնք, Հանձնաժողովի գնահատմամբ, առերեւույթ ոչ հարգալից են եղել:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է Դ. Սարգսյանի վարքագծում Կանոնագրքի 51-րդ կետի առերեւույթ խախտման հատկանիշների առկայությունը եւ որոշել դեպքի առթիվ նախաձեռնել վարույթ:

Հիշեցնենք, որ Դավիթ Սարգսյանը հաճախ է հայտնվում սկանդալների կենտրոնում: Վերջինս ոչ վաղ անցյալում՝ ամիսներ առաջ, Դիլիջանում բռնկված հրդեհը հանգցնելու համար ծխախոտը ձեռքին կանգնած էր հենց բռնկման կենտրոնում, որի պատճառով էլ հայտնվել էր հանրային պարսավանքի կիզակետում:

Հիշեցնենք, որ Դավիթ Սարգսյանը մեկ անգամ էլ վարչական տուգանքի էր ենթարկվել այն բանի համար, որ կասկածելի աճուրդներով շուկայականից զգալի էժան գներով եւ հրատապ կարգով Դիլիջան քաղաքից հող է վաճառել հարազատ եղբորը՝ Սասուն Սարգսյանին: Նա 2024թ. մայիս-հունիս ամիսներին համայնքային հողերից 1650 քմ՝ հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 11 մլն 550 հազար դրամով վաճառել է եղբորը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ է հարուցել եւ վարչական տուգանք սահմանել՝ 300 հազար դրամ:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԷՑ-Ը ԿԱՅՈՒՆ ՎԻՃԱԿՈՒՄ Է

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության ժամանակավոր կառավարիչ Ռոմանոս Պետրոսյանը հունվարի 21-ին ընկերության գլխամասային գրասենյակում ընդունել է «Արդշինբանկ» ԲԲԸ վարչության նախագահ Արտակ Անանյանին եւ վարչության անդամ, կորպորատիվ բիզնեսի տնօրեն Արմեն Գասպարյանին:

Ինչպես հայտնում են ՀԷՑ ՓԲԸ հասարակայնության եւ կորպորատիվ կապերի դեպարտամենտից՝ հանդիպմանը ներկա են եղել նաեւ ՀԷՑ ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ, էկոնոմիկայի եւ ֆինանսների տնօրեն Ա. Շահնազարյանը եւ գլխավոր տնօրենի խորհրդական Մ. Պողոսյանը:

Հանդիպման սկզբում Ռոմանոս Պետրոսյանն առանձնահատուկ կարեւորել է համագործակցության ընթացիկ պայմանների հնարավոր լավարկմանն ուղղված նախաձեռնությունները, ինչպես նաեւ քննարկվել են «Արդշինբանկ» ԲԲ ընկերության կողմից ՀԷՑ-ին մատուցվող ընթացիկ գործառնությունների պայմաններին եւ ժամկետներին վերաբերող մանրամասներ:

Հարցադրումներին ի պատասխան՝ ժամանակավոր կառավարիչը նշել է, որ ընկերությունն այս պահին գտնվում է ֆինանսապես կայուն եւ տնտեսապես բարենպաստ վիճակում, ինչը հնարավորություն է ընձեռում ընկերությանը ոչ միայն կատարելու իր առջեւ դրված ֆինանսական պարտավորությունները, այլ նաեւ հանդես գալու այլ գործառնություններով:

Քննարկվել են նաեւ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության եւ «Արդշինբանկ» ԲԲ ընկերության միջեւ ընթացիկ համագործակցության շրջանակում առկա մի շարք հարցեր՝ ընդգծելով կողմերի միջեւ երկուստեք պատրաստակամությունը փոխադարձ գործընկերային հարաբերությունների բովանդակային լավարկման արդյունքում համագործակցությունը բերելու ավելի փոխշահավետ մակարդակի:

ՀՀ ԴԵՍՊԱՆԻ ԱՅՑԸ

Միացյալ Նահանգների Յուտա նահանգ կատարած աշխատանքային այցի շրջանակում ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան Նարեկ Մկրտչյանն այցելել է Յուտայի Առեւտրի համաշխարհային կենտրոն, ինչպես նաեւ նահանգի խոշորագույն արդյունաբերական DoTerra ընկերության կենտրոնակայան:

Այս մասին նշված է ԱՄՆ-ում ՀՀ դեսպանության տարածած հաղորդագրության մեջ:

Նշվում է, որ Առեւտրի համաշխարհային կենտրոնում դեսպան Մկրտչյանը հանդիպել է կենտրոնի նախագահ եւ գործադիր տնօրեն Ջոնաթան Ֆրիդմանին: Հանդիպմանը ներկա են գտնվել նաեւ Ստերլինգ հիմնադրամի գործադիր տնօրեն Մայլս Հենսենը եւ ձեռներեց, պրոֆեսոր Փոլ Ահլսթրոմը:

Դեսպանության փոխանցմամբ՝ հանդիպմանը Նարեկ Մկրտչյանը ներկայացրել է ՀՀ-ԱՄՆ վերջին տնտեսական եւ քաղաքական զարգացումները:

Ջ. Ֆրիդմանը ընդգծել է, որ Յուտան լավագույն նահանգներից մեկն է տեխնոլոգիական ոլորտում համագործակցության համար:

Հանդիպման ավարտին կողմերը ընդգծել են համագործակցությանն ուղղված կոնկրետ քայլերի իրականացման հանձնառությունը:

Հաղորդվում է, որ DoTerra-ի կենտրոնակայանում դեսպանը հանդիպում է ունեցել նաեւ հիմնադիր նախագահ եւ գործադիր տնօրեն Դեյվիդ Ստերլինգի հետ:

«Քննարկվել են համագործակցության հնարավոր ոլորտներն ու ուղղությունները: Դեսպանը շրջայց է կատարել կենտրոնակայանում եւ ծանոթացել ընկերության գործունեությանը: Հանդիպման ավարտին դեսպանը շնորհակալություն է հայտնել Դ. Ստերլինգի կողմից հիմնադրված «Ստերլինգ» հիմնադրամի՝ ՀՀ-ում իրականացվող ավելի քան 15 ծրագրերի համար»,-ասված է դեսպանության հաղորդագրության մեջ:

ՇԻՆԾՈՒ Է

«ՔԱՆԻ ՍԻՐՏՍ ԲԱԲԱԽՈՒՄ Է՝ ԿՊԱՅՔԱՐԵՄ»

«Քանի դեռ սիրտս բաբախում է, ես կպայքարեմ իմ երկրի ազատագրման համար»: Այս մասին հայտարարել է Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը երեկ՝ հունվարի 22-ին կայացած դատական նիստում:

Հիշեցնենք, որ գործով ներգրավված են մոտ երկու տասնյակ մեղադրյալներ, որոնք մեղադրվում են ռեժիմի փոփոխությանն ուղղված ահաբեկչական հարձակումներ պլանավորելու մեջ:

Մեկնաբանելով մեղադրանքի կողմի ելույթը՝ Բագրատ Սրբազանը կրկին մատնանշեց գլխավոր դատախազության եւ քննչական կոմիտեի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից անմեղության կանխավարկածի խախտումները, ինչպես նաեւ դատական գործընթացներին ուղղակի միջամտությունը՝ հանրության աչքում միտումնավոր կեղծ տպավորություն ստեղծելու նպատակով: Գալստանյանը խոստացավ արձագանքել այս գործողություններին իրավական առումով:

«Փորձաքննություն չկա, այն գոյություն չունի: Անհավանական է գործը դատարան քարշ տալ առանց փորձաքննության»: «Կլինի՞ արդյոք աշխարհում նմանատիպ մեկ ուրիշը»,-հայտարարեց արքեպիսկոպոսը՝ հավելելով, որ չկա որեւէ ապացույց, որ ձայնագրությունները չեն խմբագրվել, չհաշված այն, որ ձայնագրությունների շատ տեղերում ձայնագրությունները հստակ գրված են՝ «չի լսվում»:

«Քանի դեռ այս ռեժիմը իշխանության գլուխ է, եւ իմ սիրտը բաբախում է, ես կպայքարեմ իմ երկրի ազատագրման համար», - խոստացավ արքեպիսկոպոսը ծափահարությունների ներքո՝ հավելելով.

«Ես բացահայտ ասում եմ, որ ես եղել եմ եւ մնում եմ պայքարի մեջ: Ինձ չեն վախեցնում ո՛չ ձերբակալությունը, ո՛չ վիրավորանքները: Նրանք (պաշտոնյաները) տոննաներով գումար են ստանում երկիրը վաճառելու համար. նրանք մեր մեղադրողնե՞րն են: Գործը սկզբից մինչեւ վերջ շինծու է»:

Հիշեցնենք, որ օրեր առաջ Բագրատ Սրբազանի պաշտպան Հովհաննես Խուդոյանն Armlur.am-ի հետ զրույցում, անդրադառնալով Ազգային Ժողովում Քննչական կոմիտեի նախագահի՝ Բագրատ Սրբազանի ձեռքով գրված ենթադրյալ «ահաբեկչության պլանին», հայտնել էր, որ Բագրատ Սրբազանի ձեռքով գրված «ահաբեկչության պլան», ինչպես պնդել է ՔԿ նախագահը, բնականաբար չկա, բայց իր տանը մի ոչ ադեկվատ գրությամբ թղթի կտոր է հայտնաբերվել՝ վերագրված Բագրատ Սրբազանին:

«Տանը մի ինչ-որ ձեռագիր փաստաթուղթ է եղել՝ այլ մարդու կողմից գրված, ոչ ադեկվատ բովանդակությամբ:

«Սրբազան Շարժման» ժամանակ ինչ-որ մարդ իր մտքերը հանձնել է թղթին, տվել է իրեն, դրել են սեւագրերի հետ, գնացել է, եղել է դարակում: Քննչականը դա է հայտնաբերել, բայց ի սկզբանե դրան ուշադրություն չեն դարձրել, գործն ուղարկել են դատարան: Հիմա ինչ-որ մեկը տեսել է, որ այդ թղթի մեջ կա գրված «ահաբեկչություն» բառ:

Մինչդեռ այդ թղթի վրա շատ տարբեր բաներ կան գրված, ընդ որում՝ այնպիսի մտքեր, որ սթափ մարդը չի կարող թղթին հանձնի, ու նաեւ դա թվագրված է՝ 2023 թվական: Ենթադրում եմ, որ այդ ձեռագիրն է նկատի ունեցել Քննչական կոմիտեի նախագահը՝ «ահաբեկչության պլան» ասելով»:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Քրեական ոստիկանության Կոտայքի մարզային վարչության ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, հունվարի 20-ին այցելել են Նոր Հաճն քաղաքի 53-ամյա բնակչի տուն: Բացատրական աշխատանքի արդյունքում 53-ամյա տղամարդը ոստիկաններին է ներկայացրել 534,8 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց եւ հայտնել, որ այն պատրաստել է իր աճեցրած կանեփից:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

ԹՄՐԱՆՅՈՒԹ

Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողները օպերատիվ տեղեկություն էին ստացել, որ Արմավիրի մարզի Ծիածան գյուղի բնակիչ 56-ամյա տղամարդը թմրանյութ է պահում եւ օգտագործում:

Տեղեկությունը ստուգելու նպատակով Ծիածան մեկնած Համայնքային ոստիկանության Վաղարշապատի եւ Աշտարակի բաժինների ծառայողները 56-ամյա տղամարդու հյուրասենյակի սեղանին նկատել են թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթներ: Ծիածան գյուղի բնակիչը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Վաղարշապատի բաժին: Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

Նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում կատարված զննությամբ 56-ամյա տղամարդու տանը հայտնաբերվել է 169 գրամ մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Կատարվում է նախաքննություն:

ԱՊՕՐԻՆԻ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչությունում նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում առերեւույթ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Ա.Ա.-ն իրականացնում է ապօրինի ձեռնարկատիրական գործունեություն: Մասնավորապես, վերջինս Ա.Վ.-ից եւ Կ.Վ.-ից ձեռք է բերում շշալցված տարբեր տեսակի կեղծ օղիներ, որոնք վաճառում է տարբեր անձանց եւ տնտեսվարողների:

Քրեական վարույթի նախաքննության ընթացքում Ա.Ա.-ի, Ա.Վ.-ի եւ Կ.Վ.-ի կողմից փաստացի օգտագործվող շինությունում, բնակության վայրում եւ տրանսպորտային միջոցներում հայտնաբերվել են կեղծ օղու շշեր, պիտակներ, ակցիզներ:

Նախաքննության ընթացքում վերջիններիս կողմից վերականգնվել է պետությանը պատճառված 6 մլն ՀՀ դրամ գումարը:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՊԱՐԵԿՆԵՐԸ «ԲՌՆԵԼ» ԵՆ

Օրերս համացանցում տեսանյութեր էին շրջանառվում, որոնցում վարորդները մեքենան վարում են անկանոն՝ ոչ միայն կոպտորեն խախտելով ճանապարհային երթեւեկության կանոնները, այլեւ վտանգելով իրենց եւ երթեւեկության մյուս մասնակիցների կյանքն ու առողջությունը:

Մասնավորապես, Վայոց ձորի պարեկները հայտնաբերել են Ջառիթափ-Նոր Ազնաբերդ գյուղերը կապող ճանապարհին անկանոն երթեւեկող եւ վթարային իրավիճակ ստեղծող վարորդին:

«Վազ-2114»-ը տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք:

Մի վարորդ էլ մեքենան անկանոն վարել էր Իջեւան քաղաքում: Տավուշի մարզի պարեկները հայտնաբերել եւ պահպանվող հատուկ տարածք են տեղափոխել «Մերսեդեսը»:

Ի դեպ, մի քանի օրինազանց վարորդի էլ պարեկային ծառայողները հայտնաբերել են օպերատիվ ճանապարհով:

Երեւանի պարեկները հայտնաբերել են մայրաքաղաքի Ռուբինյանց եւ Չարենցի փողոցներում հանդիպակաց գոտիով երթեւեկող «Մերսեդեսն» ու «Վազ-2107»-ը:

Կարգազանց մի վարորդ էլ «ԲՄՎ»-ն վարում էր Սեւանա լճի սառած մակերեսին՝ այդ կերպ վտանգելով իր իսկ կյանքն ու առողջությունը:

Վարորդների նկատմամբ կազմվել են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություններ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂՆԵՐ

Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի ծառայողները ձեռնարկած միջոցառումների արդյունքում հունվարի 21-ին Բուխարեստ-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո հայտնաբերել, ձերբակալել եւ բաժին են տեղափոխել Էջմիածին քաղաքի բնակիչ 54-ամյա մի տղամարդու: Նա 2021թ. հոկտեմբերի 1-ից Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կողմից հետախուզվում էր թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների իրացման եւ մաքսանենգության մեղադրանքներով. խափանման միջոցը՝ կալանք:

***

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հունվարի 21-ին Նանսենի փողոցում հայտնաբերվել, ձերբակալվել եւ վարչություն է տեղափոխվել 44-ամյա մի տղամարդ, որը 2025թ. դեկտեմբերի 24-ից հետախուզվում էր խարդախության մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

***

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության անձի հետախուզման բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքի արդյունքում հունվարի 21-ին վարչություն է ներկայացել Երեւան քաղաքի բնակիչ 34-ամյա մի երիտասարդ, որը հետախուզվում էր առողջությանը ծանր վնաս պատճառելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա ներկայացվել է վարույթն իրականացնող մարմին:

***

Համայնքային ոստիկանության Աշտարակի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հունվարի 21-ին Նոր Երզնկա գյուղում հայտնաբերվել, ձերբակալվել եւ բաժին է տեղափոխվել 38-ամյա մի տղամարդ, որը հետախուզվում էր երթեւեկության անվտանգության եւ տրանսպորտի շահագործման կանոնները խախտելու մեղադրանքով. խափանման միջոցը՝ կալանք: Նա տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

ԱՌԱՆՑ ԱԿՑԻԶԻ ՕՂԻ

Ոստիկանության գվարդիայի ծառայողներն ու Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի պարեկները համատեղ ծառայություն իրականացնելիս Եղվարդի խճուղու հասցեներից մեկի մոտ ստուգման նպատակով կանգնեցրել են «Մազդա» մակնիշի մեքենան: Ստուգման ընթացքում պարզվել է, որ մեքենայի սրահում կա առանց ակցիզի 6 արկղ՝ ընդհանուր 72 շիշ օղի: 38-ամյա վարորդը հայտնել է, որ օղին ձեռք է բերել տելեգրամյան հարթակի միջոցով: Նա ներկայացվել է Համայնքային ոստիկանության Դավիթաշենի բաժին:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են նախաքննական մարմին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ անցած երեք օրերին հայտնաբերվել է 8 հետախուզվող, կամավոր ներկայացել է 2-ը:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ՍՊԱՆԴԱՆՈՑ ՉԿԱ

Կառավարությունը Հայաստանում սպանդանոցների ստեղծմանը աջակցելու ծրագիր է իրականացրել: Պաշտոնապես որոշված էր, որ 2020թ. հունիսի 1-ից Հայաստանում վաճառվող միսը պարտադիր պետք է ունենա սպանդանոցային ծագում: Այդ պարտադիր պահանջի կենսագործումը որոշ չափով հետաձգվեց, սակայն հետո դարձավ իրականացման ենթակա: Իսկ տուրիստական Դիլիջան քաղաքում եւ նույնանուն համայնքի 6 գյուղերում՝ Գոշում, Հովքում, Հաղարծնում, Թեղուտում, Խաչարձանում եւ Աղավնավանքում անասունների սպանդանոց չի եղել ու չկա:

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին 2024թ. ապրիլի 30-ին հարցում եմ արել, թե Տավուշի մարզի որ բնակավայրերում են սպանդանոցներ գործում, Դիլիջան քաղաքի ու Դիլիջան համայնքի 6 գյուղերի անասունները որտեղ են մորթի ենթարկվում: 2024թ. մայիսի 6-ին Տավուշի մարզպետարանից պատասխանել են. «Մարզում գործում է 5 սպանդանոց՝ 1-ական Նոյեմբերյան /ք.Նոյեմբերյան/, Դիլիջան /ք.Դիլիջան/, Իջեւան /գ.Գետահովիտ/ համայնքներում, 2 հատ Բերդ համայնքում /ք. Բերդ եւ գ.Նավուր/»:

Մարզպետարանի պատասխանում որպես Դիլիջան համայնքում գործող սպանդանոցի վայր է նշված Դիլիջան քաղաքը: 2025թ. սեպտեմբերի 16-ին Տավուշի մարզպետին նոր հարցում եմ արել. «Ի պատասխան իմ 2024թ. ապրիլի 30-ի հարցման, հայտնել եք, որ Դիլիջանում սպանդանոց է գործում: Դիլիջանում որտե՞ղ է սպանդանոց գործում, ո՞ր կազմակերպության կողմից է այն շահագործվում, ո՞ր տարածքում»: Մարզպետարանից հայտնել են. «Ձեզ ներկայացված նախկին տեղեկատվությունից հետո անցած ժամանակահատվածում Դիլիջան համայնքում մեր կողմից նշված սպանդանոցի շահագործումը դադարեցվել է» :

Իրականում Դիլիջանում 2024թ.-ին օրինական կարգով սպանդանոց չի գործել, որ դրա շահագործումը 2025-ին դադարեցվեր: Դիլիջանում առկա են, գործում են տասնյակ հյուրանոցներ, մոթելներ, հյուրատներ, ռեստորաններ, սրճարաններ, որտեղ մատուցվող մսեղիքը սպանդանոցային ծագում չունի: Անասնատերերը Դիլիջանից 34 կիլոմետր ճանապարհ չեն անցնում, հասնում Իջեւան կամ Վանաձոր, տեղի սպանդանոցներում մորթի ենթարկում իրենց անասունները: Դիլիջան քաղաքի բնակիչները եւ տուրիստական քաղաքի հազարավոր հյուրերը, ամեն օր ոչ սպանդանոցային ծագումով միս օգտագործելով, ռիսկի են ենթարկում իրենց առողջությունը: Այս մտահոգիչ իրավիճակը վաղուց գոյություն ունի, սակայն պետական համապատասխան մարմինները հիմնախնդիրը լուծելու համար քայլեր չեն ձեռնարկում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԵԿԵՂԵՑԻ

ԻՆՉՈ՞Ւ ՄԵԿ ՕՐՈՒՄ ՓՈԽԵՑ ՈՐՈՇՈՒՄԸ

Վերջերս մեծ բնաղատության տեղիք են տվել Տեր Արտաշես քահանայի վերջին երկու հրապարակային հայտարարությունները: Առաջինում նա իր աջակցությունն է հայտնում Նիկոլ Փաշինյանի առաջ բաված Եկեղեցու «բարեռորգման» ծրագրին եւ միանում է իր հոգեւոր այն եղբայրներին, որոնք եւս ողջունել են այդ ծրագիրը:

Առաջին հայտարարությունը ստորեւ.

«Ես՝ Մասյացոտնի թեմի Ոսկետափ համայնքի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Արտաշես քահանա Հակոբյանս, միանում եմ առաջնորդիս՝ Գեւորգ եպիսկոպոս Սարոյանի եւ մյուս արքեպիսկոպոսների ու եպիսկոպոսների նախաձեռնած Հայ առաքելական սուրբ եկեղեցու բարեռորոգումների արդար պահանջին»:

Այս հայտարարությունը քահանան գրել էր ֆեյսբուքյան իր էջով, ապա շատ չանցած ափսոսանք հայտնել: Հաջորդ օրը քահանայի ֆբ-յան էջով կարդում ենք երկրորդ հայտարարությունը. «Ես, Մասյացոտնի թեմի Ոսկետափի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Արտաշես քահանա Հակոբյանս, խոր ցավ եւ ափսոսանք եմ հայտնում իմ երեկվա հայտարարության կապակցությամբ, որը եղել է արտաքին ազդեցությունների, իրականությունը սխալ գնահատելու եւ հոգեկան լարվածության հետեւանք: Այդ հայտարարությունը չի արտացոլում իմ իրական դիրքորոշումն ու համոզումները»:

Այս տողերը գրել է Տեր Արտաշես քահանա Հակոբյանը՝ առանց մանրամասնելու, թե ում կողմից եւ ինչպիսի արտաքին ազդեցություններ են եղել իր նկատմամբ: Նշենք, որ Տեր Արտաշես քահանա Հակոբյանը Մասյացոտն թեմից է, որը նախկինում առաջնորդել է Վեհափառի դեմ պայքարին միացած, «տիրադավ» անվանումը ստացած Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանը:

Տեր Արտաշեսը Ոսկետափ համայնքի Սուրբ Սահակ-Մեսրոպ եկեղեցու հոգեւոր հովիվն է եւ, միաժամանակ, հոգեւոր ծառայության է կարգված Վեդի համայնքի Ոսկետափ, Տափերական, Այգավան, Նոր Կյանք, Վանաշեն, Արալեզ եւ Սիսավան բնակավայրերում:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀՈՒՆԱՍՏԱՆԸ ԿՄԵՐԺԻ ԹՐԱՄՓԻ ՀՐԱՎԵՐԸ

Հունաստանը, հավանաբար, կմերժի ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի հրավերը՝ մասնակցելու Գազայի հատվածի վերակառուցման եւ կառավարման խաղաղության խորհրդին: Դրա փոխարեն Հունաստանի իշխանությունները կընդունեն ԵՄ դիրքորոշումը, հայտարարել է Հունաստանի արտաքին գործերի նախարար Գիորգոս Գերապետրիտիսը:

Ավելի վաղ հունական «Պրոտո Թեմա» թերթը, հղում անելով աղբյուրներին, հաղորդել էր, որ Հունաստանը հակված է հրաժարվել Խաղաղության խորհրդին մասնակցելուց:

«Այս պահին պարզ է դառնում, որ Եվրամիության դիրքորոշումը գրեթե միաձայն կլինի՝ այս փուլում չմիանալ Խաղաղության խորհրդին:

Եթե Եվրամիությունն ունի նման միաձայն դիրքորոշում, ապա ակնհայտ է, որ Հունաստանը նույնպես նմանատիպ որոշում կկայացնի», - ասել է Գերապետրիտը Action24-ին տված հարցազրույցում:

Նախարարն ասել է, որ կազմակերպությունն ունի կոնկրետ իրավական պահանջներ, որոնք պահանջում են լուրջ ուսումնասիրություն: Նա բացատրել է, որ գոյություն ունի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2803 բանաձեւը Գազայի հատվածի կարգավորման վերաբերյալ, որի օգտին քվեարկել է Հունաստանը:

150 ՄԼՆ ԴՈԼԱՐԻ ՎԱՐԿ

Կառավարությունը հունվարի 22-ի նիստում հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության եւ Ասիական զարգացման բանկի միջեւ «Հարկաբյուջետային կայունության եւ ֆինանսական շուկաների զարգացման ծրագիր - Ենթածրագիր 3» վարկային համաձայնագրին:

Հիմնավորման մեջ նշվում է, որ այս համաձայնագրի ստորագրումը պայմանավորված է 2025 թվականի պետական բյուջեի մասին օրենքի կատարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Կառավարությունը մշակել է 2025թ. փոխառությունների տարեկան ծրագիրը, ըստ որի, բյուջեի աջակցության համար նախատեսված վարկային միջոցների անհրաժեշտությունը, որը նախատեսվում է ստանալ միջազգային ֆինանսական կառույցներից, այդ թվում՝ Ասիական զարգացման բանկից (ԱԶԲ), գնահատվել է մոտ 675 մլն դոլար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը նախաձեռնել է ԱԶԲ միջոցներից 150 մլն դոլար բյուջետային աջակցության վարկի ներգրավման գործընթացը:

Բյուջետային աջակցության միջոցների ստացման համար նախապայման է հանդիսանում երկկողմ համաձայնեցված քաղաքականության գործողությունների աղյուսակով (Ենթածրագիր - 3) սահմանված միջոցառումների եւ բարեփոխումների իրականացումը, որոնք արդեն իսկ կատարվել են:

Բյուջետային աջակցության միջոցներն ուղղվելու են «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով սահմանված պակասուրդի ֆինանսավորմանը:

Համաձայնագրի նախագծով առաջարկվող վարկավորման պայմանները հետեւյալն են՝

- Վարկի գումար՝ 150 մլն ԱՄՆ դոլար,
- Վարկի տոկոսադրույքի տեսակ՝ լողացող,
- Վարկի տարեկան տոկոսադրույք՝ SOFR + 0.5% մարժա + 0.1% (մարման հավելավճար):

Մարման հավելավճարը կախված է վարկի միջին ժամկետից, 0.1% դրույքաչափը կիրառվում է 9-13 տարի մարման միջին ժամկետ ունեցող վարկերի համար:

Հաշվի առնելով 17.12.2025թ. ձեւավորված SOFR դրույքաչափը՝ 3.69%, վարկի լողացող տոկոսադրույքը կկազմի 4.66%,

Պարտավորության վճար՝ տարեկան 0.15% դրույքաչափ, հաշվարկվում է վարկի չմասհանված գումարի նկատմամբ:

Վարկի ժամկետ՝ 15 տարի, որից արտոնյալ ժամկետը՝ 3 տարի:

● *Անցած 3 օրերին բացահայտվել է խարդախության 7 դեպք եւ թմրանյութի հայտնաբերման 14 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՀԻՆ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ ՓԼՈՒԶՎԵԼ Է

Կանադայի վարչապետ Մարկ Քարնին հայտարարել է, որ համաշխարհային կարգը, որը Արեւմուտքը տասնամյակներ շարունակ անվանել էր «կանոնների վրա հիմնված», փաստացի փլուզվել է, եւ Արեւմուտքը վաղուց որոշել է անտեսել այն:

«Մենք ընդունում ենք աշխարհն այնպիսին, ինչպիսին այն կա, եւ չենք սպասում այն աշխարհին, որը կցանկանայինք տեսնել: Նոստալգիան ռազմավարություն չէ», - ընդգծել է Քարնին՝ կոչ անելով դադարել ձեւացնել, թե հին մեխանիզմները շարունակում են գործել:

Քարնին հայտարարել է, որ տնտեսական ինտեգրումը վերածվել է զենքի, իսկ մաքսատուրքերն օգտագործվում են ճնշման համար, հայտնում է Bild-ը: Նրա խոսքով՝ ինստիտուտները, ներառյալ ՄԱԿ-ը եւ ԱՀԿ-ն (Առեւտրի համաշխարհային կազմակերպությունը), թուլացած են, իսկ մեծ տերություններն ավելի ու ավելի հաճախ գործում են առանց կանոններին նայելու: Նման իրականության մեջ, ըստ նրա, «սուտի մեջ ապրելն» այլեւս անհնար է. արեւմտյան երկրները պետք է իրերն իրենց անուններով կոչեն եւ դադարեն հուսալ, թե ինչ-որ մեկը կպաշտպանի իրենց:

Քարնին ելքը տեսնում է, ինչպես ինքն է ասել, «միջին տերությունների» կոոպերացիայի մեջ՝ անվտանգության, տնտեսության եւ կայունության ոլորտներում համատեղ ներդրումների, այլ ոչ թե «ազգային ամրոցների» կառուցման մեջ:

Կանադան, նրա խոսքով, արդեն փոխում է իր ուղղությունը՝ ավելացնում է պաշտպանական ծախսերը, դիվերսիֆիկացնում է առեւտուրը, ամրապնդում է գործընկերությունը ԵՄ-ի հետ եւ աջակցում է Գրենլանդիային ու Դանիային արկտիկական ինքնիշխանության հարցում:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՄԵՆԱԹԱՆԿ ԵՐԿԻՐՆ Է

Հարավային Կովկասի երկրների շարքում Հայաստանը կյանքի համար ամենաթանկ երկիրն է: Այս մասին են վկայում կյանքի արժեքի եւ որակի վերաբերյալ աշխարհի խոշորագույն տվյալների բազայի՝ Numbeo-ի տվյալները:

Հայաստանը վարկանիշային աղյուսակում զբաղեցնում է 87-րդ տեղը:

Վրաստանը գտնվում է 116-րդ հորիզոնականում, իսկ Ադրբեջանը՝ 122-րդ:

Թուրքիան զբաղեցնում է 93-րդ տեղը, իսկ Ռուսաստանը՝ 104-րդը:

Ինդեքսը հաշվի է առնում կյանքի արժեքը, սննդամթերքի եւ բնակարանի գները, հանցավորության մակարդակը, առողջապահության որակը, տրանսպորտի որակը եւ այլ գործոններ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

ՎՏԲ–Ի ՆՈՐ MIR TRAVEL ՔԱՐՏԸ

ՎՏԲ-Հայաստան բանկը մեկնարկել է MIR Travel բազմարժութային քարտը, որը նախատեսված է այն հաճախորդների համար, ովքեր պարբերաբար ուղեւորություններ են կատարում դեպի Ռուսաստան, աշխատում կամ սովորում են այնտեղ: Նոր պրոդուկտն ապահովում է միջոցների հասանելիություն երկու արժույթներով, համարավետ անկանխիկ վճարումներ եւ շահավետ միջազգային փոխանցումներ:

MIR Travel-ը բազմարժութային քարտ է. քարտապաններին միաժամանակ հասանելի են հաշիվներ ՀՀ դրամով եւ ՌԴ ռուբլով: Այն թույլ է տալիս ճկուն կառավարել միջոցները եւ կատարել գործարքներ՝ առանց լրացուցիչ փոխարկումների:

MIR Travel քարտի հիմնական առանձնահատկությունը կից քարտն է՝ հիմնական քարտի նույն հաշիվներով (մինչեւ 2 քարտ): Հաճախորդները կարող են քարտն անվճար համալրել ՌԴ ռուբլով Ռուսաստանում, իսկ կից քարտի քարտապաններն՝ ակնթարթորեն կից քարտից գումար հանել ՀՀ դրամով Հայաստանում: Քարտից քարտ փոխանցումները եւ ՌԴ տարածքում բոլոր բանկոմատներով կանխիկի մուտքագրումը հասանելի են շուրջօրյա եւ առանց միջնորդավճարի, ինչը ծառայությունը դարձնում է առավել շահավետ եւ հարմար:

MIR Travel-ով վճարումները հասանելի են Ռուսաստանի ողջ տարածքում՝ թույլ տալով հաճախորդներին ազատ օգտագործել այն ապրանքների եւ ծառայությունների դիմաց անկանխիկ վճարումների համար՝ ներառյալ գնումներն ինտերնետ միջավայրում:

«Մենք նկատում ենք շահավետ եւ հարմար ֆինանսական լուծումների նկատմամբ մեծ պահանջարկ այն հաճախորդների կողմից, որոնց կյանքը, աշխատանքը կամ ուսումը կապված են Ռուսաստանի հետ: MIR Travel քարտը համախմբում է նման օգտատերերի հիմնական կարիքները՝ անկանխիկ վճարումներ, անվճար փոխանցումներ եւ միջոցների շուրջօրյա հասանելիություն: Մեր նպատակն է ապահովել առավելագույն հարմարավետություն ամենօրյա ֆինանսական գործարքների իրականացման ժամանակ՝ անկախ գտնվելու երկրից», -նշել է ՎՏԲ-Հայաստան բանկի գլխավոր տնօրենի եւ տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Քարտի ձեւակերպման համար անհրաժեշտ է ներկայացնել անձնագիր եւ սոցիալական քարտ, իսկ երրորդ անձի անունով կից քարտ բացելու դեպքում՝ նրա անձը հաստատող փաստաթուղթը:

Միջոցները հնարավոր է արագ կառավարել Մոբայլ բանկ հավելվածի միջոցով, որը հասանելի է հաճախորդին իրեն իսկ հարմար լեզվով՝ ցանկացած պահի ապահովելով ֆինանսների լիարժեք վերահսկողություն:

MIR Travel քարտ կարելի է պատվիրել անմիջապես Բանկի կայքում, ինչպես նաեւ զանգահարելով Կոնտակտային կենտրոն՝ 8787 հեռախոսահամարով, կամ ձեւակերպել Բանկի ցանկացած մասնաճյուղում: Սակագների եւ սպասարկման պայմանների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն կարելի է գտնել ՎՏԲ-Հայաստան Բանկի պաշտոնական կայքում:

ՎՏԲ-Հայաստան բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

ԲԱՆԿԵՐ

Fitch–Ը ԲԱՐԵԼԱՎԵԼ Է ՀԵՌԱՆԿԱՐԸ

Fitch Ratings միջազգային վարկանիշային գործակալությունը բարելավել է Արդշինբանկի վարկանիշային հեռանկարը «կայուն»-ից «դրական»՝ հաստատելով Բանկի արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի վարկանիշը (Long-term Issuer Default Rating (IDR)) եւ կենսունակության վարկանիշը (VR) համապատասխանաբար՝ «BB-» եւ «bb-»-ի:

Վարկանիշային գործակալությունը, հրապարակելով վարկանիշի իր մեկնաբանությունները, մասնավորապես ընդգծել է Բանկի ունեցած առաջատար դիրքը, ակտիվների որակի կայունությունը, կապիտալացման, իրացվելիության եւ շահութաբերության բարձր մակարդակը, ինչի արդյունքում Արդշինբանկի վարկանիշը համադրվում է Հայաստանի Հանրապետության վարկանիշային մակարդակին հավասար՝ որպես մասնավոր կազմակերպության վարկանիշի գնահատման հնարավոր լավագույն ցուցանիշ:

Արդշինբանկը Հայաստանի միակ ընկերությունն է, որն ունի աշխարհի երեք առաջատար՝ Standard & Poor's, Moody's եւ Fitch վարկանիշային ընկերությունների կողմից շնորհված վարկանիշ:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

2% ՔԵՇԲԵՔ

Ստացիր աշխատավարձդ IDBank-ի Mastercard Standard քարտով եւ մինչեւ մարտի 20-ը ստացիր մինչեւ 2% քեշբեք 1000+ ՀՀ դրամի տեղական ու միջազգային վճարումներից: Արշավից օգտվելու համար պետք է պարզապես միանալ IDBank-ի IDSalary աշխատավարձային փաթեթին:

Արշավի ընթացքում կամ դրա ավարտից հետո ցանկության դեպքում կարող եք պատվիրել Arca քարտ, եւ այդ պահից քեշբեքը կշարունակեք ստանալ Arca քարտով՝ համաձայն պետական ծրագրով նախատեսված պայմանների:



IDSalary փաթեթի շրջանակում Arca քարտը սպասարկվում է անվճար գործողության ողջ ընթացքում:

Մեկ գործարքի համար տրամադրվում է առավելագույնը 6,000 ՀՀ դրամի քեշբեք: Մեկ ամսվա համար տրամադրվում է հանրագումարային առավելագույնը 60,000 ՀՀ դրամի քեշբեք՝ անկախ արշավի ընթացքում ձեռք բերած Mastercard-երի քանակից:

Mastercard Standard-ի առաջարկը գործում է 2026թ. հունվարի 20-ից մինչեւ մարտի 20-ը: Այն պահից սկսած, երբ ձեռք կբերեք ArCa քարտ, Mastercard-ի նկատմամբ հետվճարի առաջարկը կդադարի գործել: Քեշբեքը ենթակա է հարկման օրենքով սահմանված կարգով: Դուք այն ստանում եք արդեն հարկված:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՇԱՐԺԱԿԱՆ Է

ՍԻՐՈ ԲԱՐԵԽՈՍ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Սիրո բարեխոս Սուրբ Սարգսի տոնը այս տարի նշվելու է հունվարի 31-ին: Եկեղեցական այս տոնը շարժական է համարվում. նշվում է Սուրբ Զատիկից 63 օր առաջ, սովորաբար՝ հունվարի 18-ի եւ փետրվարի 23-ի միջակայքում՝ շաբաթ օրը:



Հայկական ավանդության համաձայն՝ երիտասարդները տոնի նախօրեին ամբողջ օրը ջուր չեն խմում, իսկ քնելուց առաջ ուտում են աղի բլիթ: Իսկ ո՞վ պիտի պատրաստի աղի բլիթը: Կա երկու վարկած. առաջինի համաձայն՝ աղի բլիթը պետք է պատրաստի ամուսնացյալ եւ իրեն ամուսնական կյանքում երջանիկ համարող կինը, մյուս՝ երկրորդ վարկածի համաձայն՝ աղի բլիթը պետք է պատրաստի այրի կինը:

Ըստ ավանդության՝ երիտասարդ աղջիկը կամ տղան աղի բլիթը ուտելուց հետո երազում տեսնում է իր ապագա ամուսնուն կամ կնոջը:

Սուրբ Սարգիս զորավարը համարվում է երիտասարդ զույգերի եւ սիրահարների բարեխոսը:

Ո՞վ է Սուրբ Սարգիս զորավարը

Սուրբ Սարգիս զորավարը կարգված է համաքրիստոնեական աշխարհի սրբերի դասին: Ըստ ավանդության՝ սուրբ Սարգիսը քաջ էր ու ազնիվ, օգնում էր խեղճերին ու անմեղներին, պատժում չարերին: Նա, ըստ ժողովրդական պատկերացումների, գորշ կամ ճերմակ ձիավոր էր: Սուրբ Սարգիսը իշխում էր հողմերին, քամուն, բքին, կարկուտին ու կայծակին: Նրա ձիու ոտքերի դոփյունից աշխարհն էր դղրդում, իսկ նիզակ շարժելուց բուք էր բարձրանում: Սուրբը ձիով շրջում էր լեռներում եւ օգնում կարիքավոր ճանապարհորդներին: Սակայն Սուրբ Սարգսի կարեւոր դերակատարումներից մեկը երիտասարդ սիրահարներին օգնելն էր: Նա համարվում է նաեւ ընտանիքների հովանավոր: Ավանդազրույցի համաձայն՝նա իր որդու՝Մարտիրոսի եւ 14 քաջ մարտիկների հետ նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի:

Նշենք, որ այս տարի Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը՝ Սուրբ Զատիկը, նշվելու է ապրիլի 5-ին, Մեծ Պահքը սկսվելու է փետրվարի 16-ից, Միջինքը նշվելու է մարտի 11-ին, իսկ Ծաղկազարդը՝ մարտի 29-ին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆՆԵՐ

Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տուն-մարզադպրոցում ավարտվեցին Հայաստանի շախմատի տղամարդկանց 86-րդ եւ կանանց 81-րդ առաջնությունները: Տղամարդկանց առաջնությունում չեմպիոն դարձավ գրոսմայստեր Մանուել Պետրոսյանը, որը 9 հնարավորից վաստակեց 6 միավոր, հաղորդում է ՀՇՖ-ի մամուլի ծառայությունը: Արթուր Դավթյանը, Զավեն Անդրիասյանը եւ Արամ Հակոբյանը վաստակեցին 5.5-ական միավոր: Լրացուցիչ ցուցանիշներով արծաթե մեդալակիր դարձավ միջազգային վարպետ Արթուր Դավթյանը: Լավագույն եռյակը եզրափակեց գրոսմայստեր Զավեն Անդրիասյանը: Կանանց առաջնությունում չեմպիոն դարձավ Անահիտ Մկրտչյանը, որը վաստակեց 6.5 միավոր: Արծաթե մեդալակիր դարձավ կանանց ՖԻԴԵ-ի վարպետ Աստղիկ Հակոբյանը՝ 6 միավոր: Սոնա Կրկյաշարյանը, Անի Ավետիսյանը եւ Աննա Խաչատրյանը վաստակեցին 5.5-ական միավոր: Լրացուցիչ ցուցանիշներով լավագույն եռյակը եզրափակեց Սոնա Կրկյաշարյանը: Մանուել Պետրոսյանը եւ Անահիտ Մկրտչյանը ստացան Հայաստանի հավաքականում հանդես գալու իրավունք:

ՎԱԽԵՑԵԼ Է

Խառը մենամարտերի (MMA) թեթեւ քաշային կարգում UFC դասակարգման առաջին համար Արման Ծառուկյանը (Հայաստան) պատմել է իր առաջին պրոֆեսիոնալ մենամարտի մասին MMA-ում: «Ես վախեցա, երբ անցկացնում էի առաջին պրոֆեսիոնալ մենամարտս: Մտածում էի՝դա հեշտ է փողոցային կռվի նման: Բայց երբ տեսա վանդակը, վախեցա՝ մտածելով, որ կարող եմ պարտվել եւ ինձ կարող են նոկաուտի ենթարկել: Բայց ինձ հաջողվեց հաղթել առաջին ռաունդում: Ես հասկացա, որ պետք է մի քանի սիրողական մենամարտ էլ անցկացնել եւ վերադարձա սիրողական սպորտ: Հետո դարձա Ռուսաստանի չեմպիոն, MMA-ի սպորտի վարպետ: Հետո ինձ զանգեցին UFC-ից»,- պատմել է Արման Ծառուկյանը Դեմետրիուս Ջոնսոնին տված հարցազրույցում: Առաջին մենամարտն Արման Ծառուկյանն անցկացրել է 2015-ին՝ հաղթելով ռուսաստանցի Շամիլ Օլոխանովին:

ԵՐԲՈՐԴ ՇՐՋԱՆ

Հայկական արմատներով ռուսաստանցի թենիսիստ Կարեն Խաչանովը շարունակում է ելույթները «Մեծ սաղավարտի» տարվա առաջին մրցաշարում՝ Ավստրալիայի բաց առաջնությունում: Մելբուռնում ընթացող «Australian Open»-ի տղամարդկանց մենախաղի երկրորդ շրջանում Խաչանովը մրցեց աշխարհի 242-րդ ռակետ ԱՄՆ ներկայացուցիչ Նիշեշ Բասավարեդիի հետ ու գերազանցեց երեք սեթում՝ 6:1, 6:4, 6:3 հաշվով:

Կարեն Խաչանովը պրոֆեսիոնալ թենիսիստների ասոցիացիայի (ATP) վարկանիշային աղյուսակում 18-րդն է: Նա 4 անգամ հաղթել է միջազգային ֆեդերացիայի հովանու ներքո անցկացվող մրցաշարում: Խաչանովը Տոկիոյի 32-րդ ամառային Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր է:

ԺԱՄԱՆՑ

ՔԱՐԴԱՇՅԱՆԻ ՊԱՅՈՒՍԱԿԸ ԿԵՂԾ ԷՐ

Քիմ Քարդաշյանը մեկնաբանել է Hermes-ի՝ փղի կաշվից հազվագյուտ Birkin պայուսակի շուրջ բարձր մակարդակի սկանդալը, որը անցյալ տարվա նոյեմբերին մեծ դժգոհության ալիք բարձրացրեց: Պարզվել է, որ աքսեսուարը պարզապես աքսեսուար էր: Քիմը դա բացահայտել է քրոջ՝ Քլոե Քարդաշյանի «Քլոեն Հրաշքների աշխարհում» փոդքաստի ժամանակ:

«Եթե ուշադիր նայեք, նույնիսկ պարագաները շրջված են: Դա լրիվ կեղծ էր, ոչ թե իրական պայուսակ», - խոստովանել է Քարդաշյանը:

Նախկինում աստղը լուսանկարվել էր մոխրագույն Birkin-ով Hulu-ի «All's Fair» իրավական դրամայի նկարահանման հրապարակում: Շատերը ենթադրում էին, որ Քիմը կրում էր փղի կաշվից գերհազվագյուտ Birkin՝ աքսեսուար, որը կենդանիների իրավունքների տեսանկյունից համարվում է խիստ վիճահարույց:

Քիմի խոսքով՝ ճշմարտությունն ավելի պրոզաիկ էր. պայուսակն ընտրվել էր բացառապես իր գույնի համար: «Ես մոխրագույն տեսք էի կրում, իսկ պայուսակը մոխրագույն էր», - բացատրել է նա:

Այնուամենայնիվ, չնայած աքսեսուարը կեղծ էր, Քարդաշյանը խոստովանել է, որ որոշումը սխալ էր: «Ինձ ամենաշատը վրդովեցրեց այն, թե ինչ ուղերձ նա ստեղծեց: Մարդիկ չգիտեին՝ այն իսկական է, թե կեղծ: Ես կցանկանայի, որ ես ավելի խելացի լինեի եւ այլ ընտրություն կատարեի», - ասել է նա:

Հիշեցնենք, որ PETA-ի տվյալներով՝ 1980-ականներին Hermes-ը ստեղծել է սահմանափակ քանակությամբ Birkin, որը պատրաստված է սաֆարիի ժամանակ սպանված փղի կաշվից: Այս պայուսակները երբեք մեծ քանակությամբ չեն վաճառվել, բայց այսօր երկրորդային շուկայում կարող են արժենալ մինչեւ 125,000 դոլար կամ ավելի:

Սկանդալը բուռն արձագանք է առաջացրել սոցիալական ցանցերում: Ամենակոշտ քննադատներից մեկը մոդել եւ դերասանուհի Այրլենդ Բոլդուինն էր, որը գրել է. «Սա զզվելի եւ ամոթալի է: Ես չեմ հասկանում, թե ինչու են նման մարդկանց շարունակում աջակցել»:

Քիմը խոստովանել է, որ չի մեղադրում հանրային վրդովմունքը, բայց բացատրել է, թե ինչու է լռել գրեթե երկու ամիս: «Այդ ժամանակ ես ճնշված էի «All's Fair» շոուի շուրջ քննադատությունից: Երբեմն ես նախընտրում եմ անմիջապես արձագանքել, իսկ երբեմն նախընտրում եմ յուղ չլցնել կրակի վրա: Ամեն ինչ կախված է նրանից, թե ինչպես եմ զգում», - բացատրել է նա:

Աստղը նաեւ պարզաբանել է, որ նկարահանման հրապարակ է բերել իր սեփական Birkin-ներից շատերը, սակայն որոշ աքսեսուարներ, այդ թվում՝ կեղծ «փղի» պայուսակը, նկարահանող խումբը գնել է որպես աքսեսուար:

Միեւնույն ժամանակ, Քիմի պայուսակների հավաքածուն շարունակում է տպավորիչ մնալ. անցյալ տարի նա վաճառքի էր հանել կոկորդիլոսի հազվագյուտ Birkin-ը գրեթե 50,000 դոլարով, իսկ աշնանը նա խոստովանեց, որ «վերածվել է հրեշի» մոր՝Քրիս Ջենների հետ վիճաբանությունից հետո՝Ժան-Պոլ Գոտիեի կողմից նախագծված վինտաժ Birkin-ի համար:

ՓԱՐԱՋԱՆՈՎԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

Թբիլիսիի Քաղաքային խորհրդի սրահում կայացել է մեծանուն կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովին նվիրված ստեղծագործական մրցույթի ավանդական մրցանակաբաշխությունը: Այս մասին հայտնում է Վրաստանում ՀՀ դեսպանությունը: Նշվում է, որ միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես են եկել Թբիլիսիի սակրեբուլոյի նախագահ Զուրաբ Աբաշիձեն եւ Վրաստանում ՀՀ դեսպան Աշոտ Սմբատյանը: «Իր խոսքում ՀՀ դեսպանը կարեւորեց մեծ արվեստագետի համաշխարհային մշակութային ժառանգությունը, որը կոչված է գեղագիտության լեզվով ժողովուրդներին եւ մասնավորապես հայ ու վրաց ժողովուրդներին միմյանց կապելու բարի գործին»,-ասված է դեսպանության հաղորդագրության մեջ: ՀՀ դեսպանը շնորհակալություն է հայտնել Թբիլիսիի սակրեբուլոյի ղեկավարությանը՝ ամենամյա միջոցառումը հյուրընկալելու համար, ինչպես նաեւ մյուս կազմակերպիչներին՝«Վիրահայերի միություն» հասարակական կազմակերպությանը եւ վերջինիս ղեկավար Մարի Առաքելովային:

● *Հունվարի 23-ին Բոհեմ թատրոնում տեղի կունենա «Տարան-Տարան» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 - 7000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ՝ ինչպիսի պարտականություններ ունեն ծառայողական քննության կողմերը:

Կարեն Հովակիմյան, 41 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ ծառայողական քննության կողմը պարտավոր է՝

ա) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայանալ քննության կատարման վայր եւ տալ բացատրություններ (լրացուցիչ բացատրություններ), մասնակցել այլ անհրաժեշտ գործողությունների եւ ստորագրությամբ հաստատել դրանց կապակցությամբ կազմված արձանագրությունների (տեղեկանքների) ճշտությունը, իսկ չստորագրելու դեպքում՝ ներկայացնել գրավոր պատճառաբանություն,

բ) ծառայողական քննություն վարողի պահանջով ներկայացնել քննության համար անհրաժեշտ իր մոտ եղած առարկաները եւ փաստաթղթերը,

գ) ենթարկվել ծառայողական քննություն վարողի՝ ծառայողական քննություն անցկացնելու կարգով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ծառայողական քննության ընթացքում ծառայողական քննության կողմերն ունեն նաեւ իրավական ակտերով, ինչպես նաեւ ծառայողական քննություն անցկացնելու կարգով իրենց վերապահված այլ պարտականություններ:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա ինչպե՞ս է վճարվում նրա կենսաթոշակը:

Նարինե Ստեփանյան, 71 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ն. Ստեփանյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ եթե կենսաթոշակառուն փոխում է բնակության վայրը, ապա պետք է գրավոր դիմի բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում: Բնակության նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը նախկին բնակության վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումից գրավոր պահանջում է կենսաթոշակի գործը եւ այն ստանալուց հետո շարունակում վճարել կենսաթոշակը: Կենսաթոշակ վճարելը վերսկսվում է կենսաթոշակառուի նախկին բնակության վայրում կենսաթոշակի վճարումը դադարեցնելու օրվանից:

Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավելացնենք, որ եթե կենսաթոշակ վճարելը դադարեցվել է, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմելու կամ կենսաթոշակ վճարելը վերսկսելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել: Ի դեպ, չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է միանվագ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը համացանցից

Բայազետից Արարատը լուռ է ու խիստ. ձյունով փակված գագաթները՝ ինչպես պահված խոսք, իսկ հովտում օրը շարունակվում է իր սովորական շնչով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 12 - 17 - 4 - 7
Կոտայքի լեռներ	-13 - 16 - 3 - 6
Կոտայքի նախալեռներ	- 4 - 8 - 1 - 3
Գեղարքունիք	- 10 - 15 - 3 - 6
Լոռի	-7 - 11 - 2 + 3
Տավուշ	-3 - 6 +1 + 3
Արագածոտնի լեռներ	- 12 - 15 - 4 - 7
Արագածոտնի նախալեռներ	- 4 - 9 - 1 - 4

Արարատ	- 4 - 8 0 - 2
Արմավիր	- 3 - 7 0 - 3
Վայոց ձորի լեռներ	-10 - 13 - 4 - 6
Վայոց ձորի նախալեռներ	- 3 - 6 0 - 2
Սյունիքի լեռներ	-17 - 20 - 3 - 6
Սյունիքի նախալեռներ	- 5 - 8 0 + 3
Սյունիքի հովիտներ	- 3 - 6 + 3 + 6
Երեւան	- 4 - 6 0 - 2

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **22.01.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*